ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2024 թվականի N 199

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 11.01.2024 թվականի թիվ 53-Ն որոշման պահանջով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և Վայոց ձորի մարզի համայնքների գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետ

_____ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

«11» 06. 2024 թվականի

N 199 որոշում

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Գաղտնագրման ենթակա տեղեկության անվանումը	Գաղտնիության աստիճանը
	1. ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1.	Զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհազորի և տարածքային պաշտպանության վերաբերյալ տեղեկությունները -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
2.	Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորահավաքի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռերսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնարավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական, ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրուններով ապահովելուն վերաբերող տեղեկությունները -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
3.	Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, սպառազինությունը, ապահովման և մարտունակության վիճակը, անձնակազմի, տրանսպորտային միջոցների, տեխնիկական այլ միջոցների, նյութական միջոցների (վառելիքաքսուկային և այլ միջոցներ) թվաքանակը բացահայտող տեղեկությունները, բացառությամբ, երբ նշված տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն	Գաղտնի

	-մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	
4.	Ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության աստիճանի մասին տեղեկությունները -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
	2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
5.	Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի, նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի, փաստացի չափի և դրանց տեղաբաշխման մասին տեղեկություններ	Գաղտնի
6.	Քաղաքացիական պաշտպանության պլանի մասին տեղեկություններ -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
7.	Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի, տարահանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների մասին տեղեկությունները -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
8.	Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսական և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին տեղեկությունները	Գաղտնի
9.	Տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մասին տեղեկություններ -մարզի մասշտաբով -նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	Գաղտնի
10.	Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ տեղեկությունները: -մարզի մասշտաբով	Գաղտնի

	-նույն տեղեկությունները համայնքի մասշտաբով	
11.	Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը,այդ թվում՝ տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող տեղեկությունները	Գաղտնի